

ՆՇԱՆԱԿՈՐ ՏՕՆԵՐ

Ե. ԽՈՐ ՑԱՐԻ

Նոր տարուայ կամ կաղանդի օրը, գիւղացի կինը սեղանի վրայ կը հանէ միախն պասաւուր կերակուրներ, որսվկեսև կաղանդը ֆննդեան պասի մէջ կը պատահի. — Էանէժառակ կամ չելու տօլմա, չելու փլաւ, բուռածք*, խօշապներ՝ ճիռլքէ, ծիրանէ, խախէ և չամչէ, դոցա պատրաստութիւնքը օր առաջ կը լինին: Խըրեւ կաղանդի նոտէր՝ տանտիկինը մառանից կը հանէ չոր ծիրան, ընկույզ, նուռ, (չփափելու համար գետնի տակ թաղուած) կարմիր ճշնէն¹⁾ լինձորներ և այլն:

Երբ առաօտեան «բարի լուս կը բացուի, վըր հանթէ ու դու (քրդ. 72) միլաթին», տանտիկինն ու տան սպիտակ մուրուքը ժամ կերթան և կը բարեմաղթեն արոր աշխարհին խաղաղութիւն, շնորհաւոր տարի և բարի կաղանդ՝ դու զրկեցին, բարեկամին ու ազգականին, ճժուն ու երեխին, որդուն ու հարսին:

Ժամերգութիւնից յետոյ՝ գիւղական քահանան անպաճոյն լեզով իւր հօտի «նոր տարին» կը շնորհաւորէ, սոքա երկիւղածութեամբ քահանայի աջը առնելով (համբուրելով) տուն կը վերադառնան:

Տան ջոջաւորն ու իր տանտիկինը առաջ մէկ մէկու՝ ապա իրենց որդոց ու հարսներուն, ճժուներուն ու թոռներուն կաղանդը շնորհաւորելով միրգ կը բաժանեն և սոքա մեծաւոյներու ձեռքը համբուրելով՝ ըստ սեռի և հասակի սեղանի շուրջը բոլորած կը ճաշեն տօլման ու խօշապները:

Ճաշելուց յետոյ՝ ամէն մէկը իւր բարեկամի ու ծանօթի տունը կը վաղէ նոր տարին ու կաղանդը շնորհաւորելու և կերար կաղնդելու՝ որ կը լինի մրգերու փոխանակութեամբ:

¹⁾ Մի տեսակ մանը ու խիստ կարմիր լինձոր (գաւառներից ներմուծուած):

Թող ամէն մարդ իւր ծանօթին ու բարեկամին երթալ, մէնք մտնենք զիւղի ռէկոի յառա, ուր՝ իբրև զիւղի ընդհանուր ներկայացացչի օջախ, տան զլուկս մի մարդ (առհասարակ ջոջաւորները) մէկ մէկ կապոյ միրդ, մի մի շիշ օղի առած կը ներկայանալ իւր ռէսին, որ իւր յօդալի մէշ՝ կերակուրներով և խօշապներով ու առանձինն՝ չորտով^{*)}) լիք՝ ամաններ դարսած սեղանի զլուխը նստած՝ կսպասէ ելողներուն:

Մտնողը բարե տալ ու առնելուց իստոյ, գօտուց օղու շիշը հանելով կը զբնկացնէ սեղանի վրայ՝ «իդա (այս շիշ օղին) մեր ռէսին հաղար բարի» ասելով:— Հաղար բարու տէր կենաս, կը պատախանէ ռէսը և կսկսին զիրար կաղանդել մրգեր փոխանակելով:

Եկողը նառելուն պէս, ռէսը սորա բերած օղուց մի կթղալ կը համայէ, որ պարտասոր է նա՝ խիստ յարդի և պարտադիր սովորութեան մի համաձայն, առաջ ինքը խմել ^{**)}), կթղան ձեռք առնելով:

«Է՛, ռէս, շնառը (շնորհաւոր) նոր տարի ու բարի կաղանդ, Աստուած հար դայիմ դքրզի հրմլա վըր քու փառքին հաստատ պահէ, աչքիս, զլուխիս լրմէն տարի հաօնիք իդա օրուան, Աստուած բարի նոր տարիկ մէ բերէ վըր ամեննեցուն, ամեննեցուն) սալաղէն՝ (իս սէր) վըր մըզի. կենդանութեն»:

— Անուշ անմահութեն, կը պատախաննեն ռէսն ու բաղմականքը:

Թէսը՝ կթղան ձեռքը, կը պատախանէ.

«Քու խմաճն անուշ, բարի ես եկի, յանցկի հար յօդա (այսուեղից մինչև այստեղը) վըր իմ զլիուն ու երեսին. Առառուած մարդութենից (բարեկամութիւնից) պակաս չենէ, լրմէն տարի արժանանանք իդա օրուան: (Ամէն, կը պատախաննեն).

^{*)} Հ-ըու կը կոչուի խմիչքի ժամանակ սեղանի վրայ դրուած մրգեղէնք: որից՝ ամէն մէկ կթղան խմելու ժամանակ, մէկ մէկ հատ բերաննին կը ձգեն օղու դառնութիւնը տանելու համար, միւնչոյն նպատակով գործածուած միս կամ պանիր... կը կոչուին (տաճ.) Տաղ, Տեղ:

^{**)} Բարեկամութեան պարուակով թունաորելու առաջն առնելու համար վաղ ժամանակներից ի վեր ընդունուած քաղաքավարական պարտ կամ սովորութիւն:

Աստուած Լուսաւորչու ազգ չկորցու, մըր խղճուկ աղջին լուս ու ճար մէ էնէ (Ամէն, կը պատասխանեն). խնամի՛ Պօղոս, աչքիս քաւոր Պետոյ, բարի ես եկե, աչքիս, զլուխիս, շնաւոր նոր տարի, բարի կաղանդ, կենդանութեն լըմնուդ (ամենքիդ)»:

— Անուշ, անուշ, անուշ կը պատասխանեն չորս կողմից:

Ինչպէս սովորութիւն ունին ասելու՝ էօնդանէն երթալոլ կը թանձրանայ, իւրաքանչյւր եկողին պարտաւոր է ու էսը նոյն խօսքերով դիմաւորիել ու ընդունել, նորից նոյն էնդանութիւն, նոյն անուշ անմահութիւնը, և երբ բազմականաց զլուխը կը տաք-նայ՝ կակսեն խօսել, ուրախնալ և երբեմն «թառ-թառ» ներով մասնակցիլ երգող աշըղին, որ սեղանի զարդը կը համարուի ալդ օրը, կամ Շահնշահեծին (քըղերէն) խաղեր ասողին:

Տարօրինակ սովորութիւն, որ առաւօտուանից մինչև երեկոյ, զազալին հեղուկը անյագօրէն կը խմեն և միայն թեթև ժաղաց ուտելով կը բաւականան, այս սովորութիւնը յատուկ է Մշոյ ընդհանուր ժողովրդին: Բայց խմիչք կը գործածեն աւելի մեծ զիւղերը քան փոքրերը, որոնք (առաջինները) հետզհետէ վարակուելու վրայ են արեցութեան ախտից:

Ամելի հանդարտ կանցնի կանանց շրջանը: Նորահարսներուն և նշանաձններուն տես գնացող խնամի կամ կեսուր կանայքը, տուն մտնելուն պէս, «բարի լուս» տալուց յետով, հասակակցներու հետ կը համբուրուեն, մէկմէկու նոր տարին կը շնորհաւորեն, և սեղան նստելով ու ու փըսո՞ ճաշերնին կը վերջացնեն:

Երկրորդ օրը ուրախութեան ոչինչ հետքեր չտեսնուին ժողովրդի նիստ ու կացի վրայ, բայց արբեցողներու խումառութիւնից:

Տարին յաջող և ձմեռը կարճ կը լինին, եթէ կաղանդի կամ նոր տարուալ օրը Զորեքշարթի և ուրբաթ օրերը չընկնան: Ամելի լաւ է որ արին ցողէ քան անձրև, նոր տարուց առաջ, որովհետու ալդ նշան է՝ որ խիստ երկար ու սաստկացւնչ ձմեռ կունենան:

Ծանոթեան տօնը եկեղեցական հանդէսներով կսկսի ու կը վերջանայ, և ոչինչ ժողովրդական ցոլցեր կամ խաղեր տեղի չեն տնենալ, բացի նրանից, որ տօնի ճրագալուցի երեկութան միրգ հաւաքելու համար գործէն: Էղ իտին երդիքներից, որոնք շատ անգամ մրցելէնի փոխարէն ճաշ (լորկոտ) կը քաշեն երդիքից զուրս, և յուսախար կը հեռանան փորձելու ուրիշ երդիքներ:

Ա. Սարգսի և իւր տօնի մասին վերև դրուած է արդէն:

Բ. ՏԵՐՆԹԻԶ

Տեառնընդառաջի ճրագալուծի առաւօտը, ամեն տուն, կառնեն մի քանի հատ կրծքատ աւել ու ցախաւելներ, երկար փաստի ծայր կապած կը դնեն թունդիր չօրացնելու համար, երեկութան ժամերգութիւնից լնուով, երբ եկեղեցու դռան խարուկը օրհնեալ ճրագալ վառուեցաւ, երեխայք իրենց ուշադիր երկար աւելը բռնած և,

«Տէրնդէղ՝ դարմանը կէս,

Առնեմ զբուան ենամ ի դէղ»,

երգելով ու աղաղակելով կը մօտենան բալան բոցին, և վառելով իրենց աւելները՝ շուտով կը տանեն և տանիքներու ծայրը կը տնկին: Ցոլոր տանիքներու վրայ բոց, մոծել, մուխ, աղմուկ, աղաղակ, վազվզոց, հարահրոց և, մանը ու բէդ, կնիկ ու ճիժ, կուրախանան ու կը զուարճանան:

Պատաւները նուիրական կրակից այն օրուայ ճրագը Տէրընդէղի բոցով կը վառեն, սոյն կրակով հաւերտու վետուրները կալին, որ ստերջ չմնան, զուտան (թուլս) նստեն. այդ կրակի ածուխով մատանի և տան երդիքները շուրջանակի կը զըծեն, որ չար աչքը չքանի մատանի թան ու թացանին ու առհասարակի բոլոր մարակալին: Երիտասարդները իրենց սիրելի դոմշուկներու պաշերը կը խանձեն, որ չափուած (նազար). մէկը կրակի վրայով այս ու այն կողմը կը թուշի (համարտէրը թող ասէ՝ «խոտելի է շըջիլ զւրով») միւան իւր խունջանի կամ հուճիկի ծայրը կայրէ՝ որ գալցեր ու թունաւոր օձերը իրենց չմօտենան: Ֆերերը ուշադրութեամբ ծուխի այս ու այն կողմը

ծուռելը կը դիտեն, որոնց ասելով եկող տարին ծուխի գնացած կորմը առատ ցանք կը լինի:

Նորահարս ունեցող տները բոված ցորենից՝ չամչախառն փոխինդ կը պատրաստեն և կը ցրուեն դրկեցներուն ու տանիքները գտնուող բազմութեան, դրկեց ու բարեկամ կանաչք նունպէս ընծաներով (դիմու ծածկոց, եազմա) պարտաւոր են երթալ և նորահարսները դուրս հանել է ուս Տեղադրելիք: Խակ երկրադրծ երիտասարդները, յատով Տէլոնդէղի համար պահած ցորենի կապոցներ բերելով նուիրական բոցովը կը վառեն և հասկերը փշըլով իրրեւ լաբառու (օրհնութիւնաբեր) կուտեն ու կը բաժնեն իրարու վրայ:

Գ. ԲԱՐԵԿԵՆԴՐԱՆ

Բարեկենդրանին պէտքէ անսպատճառ ուտել, խմել, հարսանիքներ սարքել և ալին. ուտելը մանաւանդ իւր չափը կանցնէ, ով որ մէկ կով ունի, բարեկենդրանի վերջին երեկոյեան ամէն ուտելիքներից յետոյ, պէտք է կիժէ և կաթն ուտէ, որ կարօտով չմնայ զատիկ օրուայ կերակուրներուն կամ թան ու թացանին:

Իրրեւ անելոտոտ կը պատմեն՝ որ այս վերջին օրը աղքատ քրտուն մէկը մի հարու տուն հիւր կը լինի, կը տեսնէ՝ որ ամքողջ օրը կերակուր կերակուրի վրայ թունդրից կը հանեն ու կուտեն, քնանալու ժամանակ, «կնիկ, կասէ չայն, ապա մի բան մոռացանք չկերանք»:

— Ի՞նչ, կասէ կինը:

«Զկով կիթեր ես»:

— Քա մարդ, ինչ աղէկ որ միտքս բերեցիր, սպասէ, մի քնիր, երթամ կովը կիթեմ, կաթը բերեմ ուտենք, ապա քնանք:

Քուրդը միւս կողմից վրայ կը բերէ. «ապա մի բան էլ մոռացերէք բոլորովին, մտքերնիդ չէք բերէ, տոսպրակիս մէջ կտոր մի չոր հաց կայ, թէ ձեր բաղեկենդրանը կը սիրէք, այն էլ կերէք»:

Բարեկենդրանի օրերը՝ փշըլուները առհասարակ, տեղի կու-

նենան կերտիսում, ուրախութիւն, պարեր, հարսանիքներ. դրէ-թէ ամէն օր, օրական մի տուն դատարկելով կը պարեն ու կը խաղան. ցերեկները, բէդարէդ մարդիկ անդամ կալերը հաւաքուած երէայն Առաջայ, շնչը և ալն խաղալով կը գուարճանան, իսկ երիտասարդները կը սարքեն ջրէադ (մականախաղ). Գիւղի առաջ կը նորին մի տափարակ և ընդարձակ տեղ, ասպարէզի մէկ գլուխը կը կանդնեն 15-20 ձիւորներ, նոյնքան ևս՝ միւս դլուխը, զինուրական կարգով ձիւորները կազմ ու պատրաստ կը կանգնեն. մինչ հանդիսատես բազմութիւնը և դափի հատանող նժորդ ձիերը անհամբեր կոպասեն, գուռնան ու դհէօլը յասուկ եղանակով մի խաղի սկիզբը կը դնեն: Կանգնող խմբերից ձիւորը մի երթալով միւսի առաջ կամ մականով նշան կանէ, կամ մականը ձգելով՝ ձիու գլուխ ետ դարձուցած կը փախչի, ձիւորը մի նորա յետևից կը գնայ, ուրիշ մի հակառակ կողմից սորա առաջ կերթայ, մինչ առաջին կաշխատի մականը ձգելով զպեցնել իւր առջևից փախչողին մի ուրիշը կը հասնի, այս անդամ սա կը փախչի և սորա յետևից ընկնողը կաշխատի դպիցնել հարուածը և, այսպէս վոխազարձաբար հարուածներ տալով ու առնելով այնքան կերթան ու դան, որ ձիերը փրփուրի ու քրտինքի մէջ կը կորեն, իսկ ձիւորներից շատերու ոտք ու գլուխը կը ծածկուին վէրքերով:

Երեկոյեան կը հաւաքուին ուշի յօդան և կը սարքեն զինուեր, օրինակ զհորդուու:

Մէկ երկու մարդու շորերը փոխել տալով չըէայ վաճառականներու տարազով կզգեստաւորին և մէկ երկու հակ կը յատկացնեն նոցու իրրեւ թանկագին իրեղէններ: Երկու երեք հոգի ևս իրրեւ գողեր կը պատրաստեն, որ ջշուտներու ապրանքը գողանան: Դողերը երթալով մի ընկեր ևս կը ճարեն իրենց, որ իրողութիւնից տեղեկութիւն չունենայ, և կերթան գողանալու ջնուղներու հակերը: Ապրանքը կը գողացուի, ջշուտները կը ներկայանան զիւղի ուշին և կը պահանջեն խուզարկութիւն: Ուէս ոստիկաններ ուղարկելով գողերը կը գտնէ, որոնք՝ դատաւորի՝ ըստ երևոյթին սպառնալեաց վրայ կը խոստովանին իրենց յանցանքը, ապրանք մէջ տեղ կուգայ, երրորդ գուշ կը-

ուսի երկիւղից դողդողալ, ջհուդները եվբէչ անելով (իբր երեսց լեզով խօսակցութիւն), թարգմանի միջոցով կը պահանջին գորերու մերկացնելը. առաջ ի հարկէ միամիտ գողը կը տկառողնայ և Ադամայ շապկով հրապարակ կիլնէ. վրիսկոց կընկնաց հանդիսականաց մէջ, խեղճ գողը դադանիքին վերահաս կը լինի, բայց արդէն ուշ, հերիք է որ պէտք եղած դուարճութիւնը տուեց ժողովրդին: Ամէնքը դոհ են և ուրախ, բացի տկառող գողից:

Անցած տարիներ մի գուարճասէր մարդ հետևեալ խաղը խաղաց գաւառիս փոխ-առաջնորդի և ղաղիի գլխուն. Կանացի հանդերձներ հաղած և երեխայի շորեր հազցուցած մի շան լակոտ գրկելով՝ նախ ներկալացաւ վարդապետին և պահանջեց սորանից արդարութիւն իւր չարագործ մարդու մասին, որ իրեն տիրութիւն չանելով ձգեր է փողանէ փողան երեսի վրայ: Մինչ վարդապետը հրամաններ կարձակէր, հայրը եւր որդու լացը կտրելու համար մի գոմի իջուց լակոտի գլխուն և սա վժալով ընկաւ վարդապետի առաջ: Ներկայ եղողները վարդապետի հետ միասին ծիծաղից լորից եղան:

Առաջնորդը կամենալով ղատիին ևս անմասն չժողնել ար ուրախութիւնից, պատուիրեց խեղկատակին՝ որ երբ ինք կերթայ ղատու տեսութեան, միւնոյն կերպ այնտեղ ևս ներկայանայ:

Չարաճնի հայն ալս անգամ շան լակոտը լաւ թրջեց և նոյն հանդերձներով ու փաթութով ներկալացաւ ղատուն, վարդապետը յայտնեց ղատաւորին եկող կնոջ թշուառ դրութեան մասին, և խնդրեց որ նորա չարագործ ալլը բերուի և տէրութեան օրէնքի համեմատ պատժուի: Դատաւոր դեռ էվբէն էվբէն էր (այս, այն,) երբ կեղծ կինը նորից մի գոմի իջուց իւր որդու գլխուն և հեռուից կանդնած ձգեց ղատու զիրկը ու փախաւ:

Հասկանալի է այժմ ղատու վիճակը, որ իւր անսովոր շարժումներով աւելի ծիծաղ կը շարժէր քան թրջած շունը:

Այս ու աբախսի անմեղ խաղեր ներելի են բարեկենդանի:

օրերը, որովհետև «արեղաթողի» օրեր են, զիւղացոց ասելով՝ սարի ճշնառորներն անգամ այդ քանի օրերը վար կիշնան և ուրախութիւններ կան։»

Բարեկենդանի վերջին օրը կանալք ևս դուարձանալու համար կը սարքեն ջլջր (թիֆլիզցոց ճշբերն)։ Երկար թոկեր երկուտակ առաստաղից կախելով մէջը կը նատեն և երթալով դալով կօրօրեն մէկզմէկ։

Դ. ԶՈԶ ՊԸՍ

Հոջ պասի առաջին օրը՝ որ կը կոչուի իւսած¹⁾), «լուացարուք որբեցարուքի» օրն է նաև, զիւղացի կինը իւր մրոտ տան տախտ ու առիքը կը որբէ, աման չամանը կը լուանալ, յևոոյ երկայն փարտ մի առնելով ծալր շոր կապած, ալիւրի մէջ կը թաթախի՛ և կակսի առաստաղի գերանները ասղանման նախշել ու զարդարել, այնպէս որ դիւղական տան ծածքի տակ մի խայտուտիկ ու շնորհալի համաստեղութիւն կը գորանալ, տան մներու վրայ նոյնպէս ալիւրով պատկերներ կը դժէ ի նշան խոյի, ուղտի, դռտանի և ալլն։

Մինչդեռ կանալք տունը կը մաքրեն ու կը նախշեն, փոքրիկներից մէկ կառնէ երկու կտոր խեցի կամ տափակ քար և կերնէ երդիքի մօտ կը կանդնի, մի քանիսն էլ երդիքի դէմ ու դէմ թունդրի կշտին կանդնած, կսպասեն. վերևինը կը հարցնէ.

«Աղամ—աղամ, ինչ աղամ»։

— Մուկն ու կատուն, ներսից կը պատասխանեն. զը՛ռ, քարերը կը քսէ իրարու վրայ և էտոյ մուն ու էտոռն։ Դարձեալ. «աղամ—աղամ, ինչ աղամ»։

— Օձն ու կարիճ, կետուռն ու թրթուռ, արջն ու գէն, կիրիքէն ու ճրճիքէն (միջատ) և ալն և ալն։ Քարերը նորից կը զառն և վերոդրեալ վնասակար կենդանիները աղացուելով կը չքանան։

¹⁾ Կռնն կը կոչուի սնասնոց լարդ. կամ խոտը ուտելուց յետով մնացած խոշոր մանրուկը։

Քոջ պասի զարդարանքներից մէկն է նաև Աւշտիւը, որ Աւուշ-քէկ (պաս-քէկ) ևս կը կոչուի: Երեխաները վախեցնելու համար՝ մի փոքր էռ-էռ (բաղարջիկ) կամ մի մեծ զլուկս սոխ առնելով շուրջանակի եօթ վիստուր կը ցցեն, (վիստուրները ու պէտք է լինին, որ գարուն շուտ գայ) և նշան եօթ շաբաթներու, իսկ մի կողմը սուր փայտ մի կը խթեն, իրրև կտուց աքլատիղի: Թունդրի ծուխը կը բարձրանալ, աքլատիղը որորուելով կը պտտի և կը սաստէ երեխալոյ, որ պասի բոլորը չերթան, թէ չէ՝ աչքերնին կը հանէ:

Այդ օրը պէտք է անպատճառ խունկիլի բաղարջ եփել ուսել, որ ծերերու ասելով՝ Խորակէլացոց Եղիպտոսից ելնելու վիշտատակին է նուիրուած. նոյնակս իրրև պարտադիր կրօնական ծէս կամ սովորութիւն հարդիք (թիֆլօղեցոց ծանդիլը) կը խաշեն կոտեն, որ երեխաները ուսելով կերպեն.

«Խունկիլի հաց ու հատիկ»

Բարով լիդայ մեր Զատիկ»:

Քոջ պասի առաջին շաբաթուայ օրերից մէկը նուիրուած է իսուղած շան, որ չխածէ, մէկը մէկն՝ վնաս չտալու համար, մէկը իսուղածին՝ մարդոց վրայ չխփելու համար, մէկը Ռաշունին, (տես Տղաբերք և կնունք). որպէս զի երեխայք չժալցնեն:

Մ Ի Զ Ի Ն Ք

Մեծ պասի միջին շաբաթը կը կոչուի Ֆիջնա, միջինքին մի մեծ ձիթով բաղարջ կը պատրաստեն և մէջը մի ուշունչ կամ մատանի կը դնեն, ընտանիքի անդամոց վրայ մաս մաս բաժանած ժամանակ, ուշունքը կամ մատանին, որ մէկի բաժնի մէջ որ գուրս եկաւ, տան Դաշտ-Եր (Հարստութիւն) հորոգունին է իտուն. եթէ բաղարջը կտրելու ատեն նշանը դանակի բերանը ելնէ՝ դօլվաթը բոլոր տանեցոց կը պատկանի:

ԸՆԱԳ ՀԻՆԴԱԲԲԹԻՒՆ

Այս օրը ամենալրնտիր և սուրբ օրը կը համարուի, ինչ զործի որ ձեռք զարկեն՝ աջող կը լինի, ինչ որ խորհրդան՝ Աստուած կը լիէ, դարա համար՝ կանագք պանրի դեղնուրը կը պատրաստեն (տես Արհեստներ), դարրիններուն պատրաստել

կուտան պաշտառ չըեր, զանազան հիւսնդութեանց համար ոտք ու ձեռք նաև պարանոյը անցկացնելու, պատարագից լեռոյ ժամու դուռ կանգնած՝ քարեր կը գլորեն ցաւ ու չօռը հետը դլրելու համար։ Երկրագործը իւր սերմունքը ջոկջոկ կապցներու մէջ ածած խարդան կոյթի հետ միասին ժամը կը տանէ և կը դնէ Շաշոցի բառ։

Այս տօնից լեռոյ մի շաբաթ կիրակի կը պահուի ի պատիւ Քոթորէն և լուացք ամենևէն չեն աներ, մի օր՝ չյու կիրակի, և այդ օրուայ եփուած ժթժուն կանուանեն չյու Ալու։

Ե. ՖԱՌԶԱՐԴԱՐԻՆ ՈՒ ԻՒՐ ԿԱՐԿԱՇԱՆ

Եթու արշալուր չբացուած զիւղացու մեծ ու փոքրը, պառաւ ու հալւոր, մարդ ու կին, աղջիկ ու տղայ, ճիժ ու երեխայ գուգուած ու զարդարուած կը լցուին եկեղեցի, «պաշտումն» է կասեն զիւղացիք. ասեղ քցես՝ գետին ընկնայ. որավկնետե իդական սեռը մանաւանդ, տարին հազիւ 4-5 անգամ եկեղեցու երեսը կը տեսնէ, եկեղեցական հանդէսներու արարողութիւնքը մեծ տպաւորութիւն կը թողնեն նորա վրայ, անհամբեր սպասելով ուռ օրհնելուն, «կը խօսին ու խոստովանին» և կարդով կսկսին դուրս դալ. երիտասարդները եկեղեցու դուռը փողանաձեւ կանգներով ենող աղջիկան և մանաւանդ «սրտի սիրածներուն» օրհնած ուռուսի շրփ ու հա շրփ տալով ճամրու կը դնեն։

Երբ արեգակ «բաժ մը երկու» կը բարձրանայ, փոքրիկ տղայք խումբերով տնէ տուն կը պտտին հաւկիթ հաւաքելու և դրէթէ սպառնական ձևով կը կրկնեն կարկաչացի ոտանաւորը։

«Կարկաչայ,

Կարկնաչայ,

Որ չիտայ

Զիմ կարկաչէն,

Կերթամ ասեմ՝

Պոլ երիցուն,

Կիգայ . . .

Զեր ձձում»։

Աւագ՝ ուրբաթին հօտաղները դետինը կը փլնկեն¹⁾ «Յու-
ղի աչքը հանելու» համար, ծերերն Յուդի ինադուն (ջզրու)
ծոմերնին կուտեն: Վերջին շաբաթուայ մէջ կը ներկեն զատկի
կարմիր հավկիթը և կը պատրաստուեն Քրիստոսի սուրբ Յա-
րութեան:

Ամէն տարի Զատկի զիշերը՝ մեր զիւղի ժամկոչ Յառա-
տուրը երդիքէ երդիք պատելով փայտով կը տրիկացնէր տա-
նիքներուն և մորմոքող ձախով կերգէր ու Յարութեան երդը.

«Քրիստոնէք, արթուն կեցէք,

Քրիստոնէք, ժամ Հրամեցէք,

Մեզ ու ձեզ մեծ աւետիք.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քնաթաթախս աչքերով կը զագենք եկեղեցի և տիրացուի
ժամաշապկի փէշը հաւկիթ ձգելով +որ ու Եղիշաբէտ կը դառ-
նալինք զիւղական երեխայներու հետ:

Զ. ՀԱՄԲՈՐՃՈՒՄ

Ազգային ու եկեղեցական տօներից ամենաժողովրդականնը
գրէթէ Համբարձման տօնն է, որու հետ կապուած են Լէլլ ու
Մէջումի անունները ու կարգը, ժողովրդական աւանդու-
թիւններ ու սովորութիւններ: Համբարձումը դայ անցնի և Լէլլ
ու Մէջումի լիշտակութիւնը զինի՝ այդ անկարելի է. մէկը
կրօնական ու միւսը ժողովրդական վերացուցման իդէալներ, —
Համբարձման՝ Փրկիչը կը Համբառն ք, և ժողովրդա-
կան տօնին՝ Լէլլ ու Մէջումը երկինք կը թռնան և աստղ
կը դառնան:

Ժողովրդական աււենդութեամբ Լէլլ (աղջիկը) և Մէջում
(երիտասարդը) երկու ծոռւկներ կը լինին (սիրահարներ), որոնք
Մէջումի ծնողաց կամակոր բռնութեան իրբեւ անմեղ դոհեր,
մի քաղցր տեսակցութեան բոպէին, երբ տղալի մալրը յանկարծ
զրկախառնուած կը տեսնէ սիրահար զոյզը, սոքա ամօթից
ու երկիւղից Ասոծուն կապաւինեն և ինսիրքով ու սպադատան-
քով երինքն իը լուչին և առաջ իը դառնան:

¹⁾ Փլունկ կը կոչուի բանջարի տակը հողից հանելու համար յարմա-
բեցրած տափակ և սուր քիթ փայտը:

Ամէն տարի համբարձման գիշերը, այդ լաւսոենական սիրահար դոդ աստղերը կուգան մէկ տեղ և զիրար կը համբութեն։ սոցա ողջապուրանքը ու համբուլները տեսնելու համար շատ ցանկացողներ համբարձման ամբողջ գիշերը դուրս կըմնան և պշտոցեալ երկինք կը նախն։

Քրդաց ու տաճկաց ժողովրդական բանաւոր բանահիւսութեան մէջ բաւական ընդարձակ տեղ կըդրաւեն Լէլ ու Մէջ-լումի խաղերը (երգերը)։

Համբարձման գիշերը էմին ծագէն լոյն իռ-պայ և արթուն մնացողը վնասուելով կը դանէ։

Այդ գիշերը ամէն ցաւադար անձ գիշերով կը լողանայ, որ հիւանդութիւններից ազատուի։

Համբարձումից մէկ օր առաջ գիւղական փոքր աղջիկները խումբեր կազմած՝ կը բարձրանան սարերը՝ եօթ բանգ ծաղիկ հաւաքելու, եօթ տարրեր աղըիւրներից ջուր վերցնելով կածեն մի բղոյի մէջ, որ կը կոչուի վիճակ (վիճակ) բնձի, եօթներանգ ծաղկելունջը կը գնեն բղկի բերանը, և տօնի օրը խումբ խումբ տները շրջելով կը հաւաքեն իւղ և հաւկիթ, որոնցով դաշտը կերակուր կեփին և երգելով կուրախանան (սովորական պարերգեր)։

Իւրաքանչյուր խումբը ունի իւր զարգարուած ու զուգուած հարուց և բնձի բանալը, վերջնոր համար յատկացուցած է տողերս՝ Վիճակ. վիճակ, վիճակ ջան,
Վիճակի թեւերն էր նիշշուն,
Խումբեր լըմէն բալաք շուն։

Տանակին կանալք նոյնպէս դաշտը կերթան որոնելու երեք-նուկ (Trifolium pratense) թուփ խոտը, որպէս զի ձձմի մէջ ձգեն և տարուալ իւղն ու թացանը բարաքուն (օրհնուած, լիառատ) լինին, եթէ չորսութը (նոյն խոտը՝ միայն չորս հակաղիք (թփերով) կարողանան գտնել, աւելի լաւ։

Միւնոյն օրը կանալք կը ճարեն մի էքեայի իօս (պատեանը), չյու շողին (թողած մորթը), եւու պայտ և գիրուղոյ ուշունք ու միասին կը կախեն ձձմից որ չաչքառի (նազար)։

Համբարձման գիշերը կթան տաւարները դուրս կը տանեն արածացնելու, որպէս զի լէտրտը կանալք չկախարդեն, իսկ եթէ

ներս մնան, բոլոր երդիքներու և ցուիքներու չորս կողմը ուղիղ կոչուած ձեռով անսասնոց թրիքը շուրջանակի կը դարսեն, որ կախարդանքը ներս չմտնէ:

Որպէս զի լէպրար պառաւը իւր դրացու իւղ ու մածունի, թան ու թացանի և մառանի բարեաւութ փոխադրէ իւր տունը, չամբարձման գիշերը կը տկլողնայ, իւր ձձումը կը հարէ, իւղը խաչակնքելով բղկի մէջ կածէ, իսկ լանջութ կը թափէ դրացու տանիքի վրայ, յիտոյ մազէ լարանը (թել) կը կապէ մէջքը, կաշէ գողնոցը վրան՝ ծածուկ կը սալրի հարևանի կթան անսասնոց ախտուը և արագ արագ կը շէնքայ տաւարներու վրայով ու կը փախչի դուրս:

Այնպիսի չորրո՞ներ ևս կան, որոնք միևնույն վերտղբեալ նպատակով էն ժիշտն դրկեցներու դռները:

«Համբարձման գիշեր՝ ես ու իմ կնիկ դացինք գետ լող-կցանք օր մեր ցաւ ու չոռը (հիւանդութիւնը) տէնք հըստ ջրերուն, ես քընց իմ կնիկ շուտ էլայ ջրէն, շորերս կը հազ-նէնք, դարձայ յիտուս աչքի՝ կնիկ չկայ, հայ յօդա (այստեղ) կնիկ, յօնա (այստեղ) կնիկ՝ չկէր. աներւոյթք եղաւ: Դացի մըտ թղթբաց, թղթբացն ըսեց՝ Ախտարք նշանց կիտակ՝ օր շարքեր տարած են զքու կնիկ: Վերջ. — վերջն էն է, օր պտի համբերես հարի տարիմ՝ լէ չամբարձման:

Եկող տարի համբարձման՝ ես ու թղթբացը դացինք ջրէ ափ, էնի (նա) նստաւ, գրեց ու ճգեց, ես կանայ ու սպասեցի: — չանդէ (ահաւասիկ) եկան, ըսեց. աղէկ աչքէ: Դառնամ աչ-քիմ օր (որ) Անդ յէ (խումբ մի) ֆոէ էն դիէն կիդան, իմ կնիկ լէ մըջ ուրանց, ճիժմ լէ գիրկ, զճիժ (երեխայ) ըսնի թալի հըստ ջրին ու կնկաս ձեռք բռնելով բերի տուն»:

(Ճողովը դրական զրոյց):

Վարդավառին և ս. Աստուածածնայ տօնին տեղի կունենայ ուխտագնացութիւն դէպի ս. Կարապետ և միւս՝ գաւառի մէջ գոնուած սրբավայրերը, և բացի սովորական քէֆ ու ուրախութիւններից՝ առանձնն ժողովրդական սովորութիւններ տեղի չեն ունենայր, կամ ականատես լինենք ինձ ոչինչ յախոնի ցին: